# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՎԵՑԻՆ 17 ՆՈՐ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց Ս. Ստեփաննոս Նախավկայի և առաջին մարտիրոսի տոնը, և Միածնաէջ Մայր Տաճարում Ս. Ստեփաննոսի Խորանի առջև մատուցվեց եպիսկոպոսական Ս. Պատարագ:

Ստեփաննոս Նախավկայի հիշատակության օրը Հայոց Եկեղեցում համարվում է սարկավագների տոն, և ձևավորված ավանդույթով կատարվում է սարկավագական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի, սարկավագական աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 17 սաներ, ովքեր հաջողությամբ հանձնել էին սարկավագական քննությունները:

«Ուրախ է այսօր Հայոց Եկեղեցին, քանզի հավատքի վկաների և առ Հայրենին մարտիրոսված նահատակների արյամբ ձեռքբերված անկախացյալ ազատ հայրենիքում այսօր հոգևոր զարթոնքն ու վերածնունդն են ապրում մեր Սուրբ Եկեղեցին ու ազգս հայոց, որի խոսուն վկայություններից է 17 սարկավագների այս ձեռնադրությունը»,- նշեց Սրբազան Հայրն իր խոսքում:

Ս. Պատարագից հետո Վեհարանում նորընծա և Մայր Աթոռի միաբան սարկավագներին իր հայրական օրհնությունն ու պատգամը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, շնորհավորելով սարկավագներին տոնի առիթով, իր ուրախությունը հայտնեց, որ Մայր Աթոռի միաբան շուրջ 50 սարկավագներին ավելացան ևս 17-ը՝ հորդորելով առավել նախանձախնդրությամբ և ջանասիրությամբ լծվել իրենց պարտականությունների իրականացմանը՝ աչքի առաջ միշտ ունենալով Ս. Ստեփաննոսի հավատքի ամրությունն ու արիասիրտ ոգին:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարում տեղի ունեցավ շուրջ 55 ճեմարանականների դպրական ձեռնադրություն և ուրարների տվչություն:

**Արմեն սարկավագ Գևորգյան**

Ծնվել է 1982 թ. մարտի 24-ին Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղում:

1989-1999 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1999 թ. սեպտեմբերին ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2003 թվականից ուսումնառությունը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Նոյ սարկավագ Նազարյան**

Ծնվել է 1982 թ. օգոստոսի 20-ին Նաիրիի շրջանի Նոր Երզնկա գյուղում:

1988-1991 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1991-1999 թթ. սովորել և ավարտել է Աշտարակ քաղաքի Ներսես Աշտարակեցու անվան թիվ 1 դպրոցը:

1999 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան և այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Արփյոմ սարկավագ Անանյան**

Ծնվել է 1982 թ. հոկտեմբերի 1-ին Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում:

1989-1999 թթ. սովորել և ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1999-2000 թթ. ուսումնական տարում ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2003-2004 թթ. ուսումնական տարվանից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Հմայակ սարկավագ Մանուկյան**

Ծնվել է 1982 թ. նոյեմբերի 7-ին Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղում:

1989-1999 թթ. սովորել է տեղի Յուրա (Էդվարդ) Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոցում:

1999 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2003 թ. փոխադրվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Սահակ սարկավագ Սահակյան**

Ծնվել է 1981 թ. դեկտեմբերի 23-ին Էջմիածնի շրջանի Առատաշեն գյուղում:

1989-1999 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1999 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2003 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Արտակ սարկավագ Օհանյան**

Ծնվել է 1978 թ. մայիսի 28-ին Աշտարակ քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է տեղի Նորայր Սիսակյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. ծառայել է ՀՀ Զինված Ուժերում:

1999 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:



ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Ар... ССР
Фундаментальная библиотека



ՆՈՐ ՁԵՌՆԱԴՐՎԱԾ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ

**Ներսեհ սարկավագ Սարգսյան**

Ծնվել է 1982 թ. փետրվարի 24-ին Մասիս քաղաքում:

1988-1998 թթ. սովորել և ավարտել է տեղի թիվ 6 միջնակարգ դպրոցը:

1999-2003 թթ. ընդունվել և ավարտել է Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

2003 թվականին ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան և այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Աշոտ սարկավագ Սահակյան**

Ծնվել է 1982 թ. փետրվարի 23-ին Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղում:

1988-1999 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1999-2003 թթ. սովորել և ավարտել է Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

2003 թ. մայիսից ուսումնառությունը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Վարդան սարկավագ Բաղումյան**

Ծնվել է 1982 թ. հուլիսի 18-ին Էջմիածին քաղաքում:

1988-1996 թթ. սովորել է տեղի Վ. Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

1996-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

1999 թ. ընդունվել է Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

2003 թվականից ուսումնառությունը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Սարգիս սարկավագ Յագիջյան**

Ծնվել է 1981 թ. ապրիլի 20-ին Երևան քաղաքում:

1988-1996 թթ. սովորել է Երևանի Մանվել Քաջունու անվան թիվ 54 միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. սովորել է Երևանի թիվ 149 ավագ-դպրոց վարժարանում (թոլեջ օտար լեզուների թեքումով):

1999-2003 թթ. սովորել է Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003 թ. մայիսից ուսումնառությունը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Զ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Անդրեյ սարկավագ Սարգսյան**

Ծնվել է 1982 թ. նոյեմբերի 14-ին Էջմիածին քաղաքում:

1989-1993 թթ. սովորել է տեղի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1993-1999 թթ. սովորել է տեղի Ներսիսյան վարժարանում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003 թ. մայիսից ուսումնառությունը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ջ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Հակոբ սարկավագ Մովսիսյան**

Ծնվել է 1982 թ. մարտի 16-ին Վանաձոր քաղաքում:

1989-1999 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003 թ. մայիսից ուսումնառությունը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ սովորում է Ջ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Սմնասար սարկավագ Ղուլիկյան**

Ծնվել է 1976 թ. սեպտեմբերի 21-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1993 թ. ընդունվել է Շիրակի թեմի Հոգևոր Դպրանոց:

1996 թ. մայիսին փոխադրվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ջ լսարանում

2001 թ. հանձնելով առարկայական տարբերությունները՝ ընդունվել և 2003 թվականին ավարտել է Երևանի Տնտեսա-Իրավագիտական համալսարանի (Ախալքալաքի մասնաճյուղ) իրավաբանական ֆակուլտետը:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Հայկ սարկավագ Բարսեղյան**

Ծնվել է 1982 թ. հունվարի 5-ին Էջմիածին քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է տեղի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ռուսական միջնակարգ դպրոցում:

1998 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան:

Այժմ սովորում է Ջ լսարանում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Արկադի սարկավագ Օրդոյան**

Ծնվել է 1981 թ. նոյեմբերի 20-ին Մասիս քաղաքում:

1988-1998 թթ. սովորել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

1998-2004 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2004 թ. օգոստոսի 16-ին նշանակվել է ՔԴԿ-ում որպես գործավար քարտուղար:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Դավիթ սարկավագ Չեթենգյա**

Ծնվել է 1981 թ. ապրիլի 20-ին Կ. Պոլսում:

1987-1995 թթ. սովորել է Պազըր գյուղի Տապյան վարժարանում:

1995-1999 թթ սովորել է Չավուշօղլու քոլեջում:

2000-2004 թթ. սովորել է Հալիչի համալսարանի Ճարտարապետական բաժնում, այնուհետև մեկ տարի աշխատել է Պալատի վերականգնման բաժնում:

Այժմ ուսումը շարունակում է Երևանի Ճարտարապետաշինարարական Պետական Համալսարանի Ճարտարապետական բաժնում: Ուսմանը զուգահեռ աշխատում է նաև Մայր Աթոռի Ճարտարապետաշինարարական բաժնում:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

**Դավիթ սարկավագ Գույյան**

Ծնվել է 1980 թ. դեկտեմբերի 21-ին Երևան քաղաքում:

1987-1998 թթ. սովորել է Երևանի թիվ 178 միջնակարգ դպրոցում:

1998-2004 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Այժմ աշխատում է Մայր Աթոռի գանձատանը:

2004 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*